# ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՓՈՐՁՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիրը Եվրոպական միության և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»–ի հետ համատեղ:

Ծրագիրը մեկնարկել է 2023թ.-ի մարտից և ընդհանուր նպատակն է խթանել երիտասարդների մասնակցությունը կրթության, քաղաքացիական հասարակության և քաղաքականության մեջ: Ծրագրի հատուկ նպատակն է հզորացնել և կրթել երիտասարդներին և երիտասարդական ՀԿ-ներին՝ խրախուսելով նրանց ակտիվ մասնակցությունը Հայաստանի քաղաքացիական և հասարակական կյանքում:

## ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

**<u>Մրցույթի նպատակները և ակնկալվող արդյունքները.</u>**

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը (Հիմնադրամ) և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնը» (ԵՆԿ) հրավիրում են Հայաստանի 6 մարզերի՝ **Արմավիրի, Տավուշի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի**, 18-25 տարեկան երիտասարդ մասնագետներին դիմելու փորձնակության բաց մրցույթին: Սույն մրցույթի շնորհիվ երիտասարդ մասնագետները հնարավորություն կունենան ձեռք բերել մասնագիտական փորձառություն և ստանալ ուղղորդում ոլորտային փորձագետների կողմից:

Հյուրընկալող կազմակերպություններին և փորձնակներին իրար հետ կապելու համար իրականացվելու է քարտեզագրում՝ հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները և փորձառությունները, ինչպես նաև փորձնակների կողմից հայտադիմումում նշված ոլորտները:

**Մրցույթի նպատակներն են.**

- **Հյուրընկալող կազմակերպությունների և երիտասարդ մասնագետների կարողությունների զարգացում.** Առաջնային նպատակն է զարգացնել հյուրընկալող կազմակերպությունների և երիտասարդ մասնագետների կարողությունները Արմավիրի, Տավուշի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում: Այն ներառում է մենթորության և աջակցության տրամադրում հյուրընկալող կազմակերպություններին՝ մշակելու գործողությունների համապարփակ ծրագրեր, որոնց միջոցով կազմակերպությունները հնարավորություն կունենան առաջարկել մենթորություն և ապահովել փորձնակների կողմից գործնական հմտությունների ձեռքբերումը: Այս մրցույթը նաև նպատակ ունի հյուրընկալող կազմակերպություններին տրամադրել նորարարական գաղափարներ և թարմ մոտեցումներ՝ հարստացնելու իրենց գործունեության շրջանակը: Հյուրընկալող կազմակերպությունների մենթորության և առաջնորդության շնորհիվ փորձնակները հնարավորություն կունենան զարգացնել իրենց մասնագիտական կարողությունները: Այս փորձառությունը կարող է զգալիորեն նպաստել նրանց անձնական և մասնագիտական աճին՝ նրանց աշխատաշուկայում ավելի մրցունակ դարձնելով:
- **Երիտասարդների զորեղացում և մասնակցության խթանում.** Մրցույթի նպատակն է խթանել երիտասարդների բովանդակալից ներգրավվածությանը Հայաստանի քաղաքացիական հասարակության և հանրային ոլորտներում: Այն միտված է երիտասարդների զորեղացմանը՝ աշխատանքային փորձառության ձեռք բերման, մասնագիտական հմտությունների զարգացման և հանրային տարբեր ոլորտներում ներգրավված լինելու հնարավորությունների ստեղծման միջոցով:
- **Համագործակցություն.** Այս մրցույթը նպատակ ունի խթանելու համագործակցությունը հյուրընկալող կազմակերպությունների, ծրագրի գործընկերների և փորձնակների միջև: Փորձնակները հնարավորություն կունենան համագործակցելու հյուրընկալող կազմակերպությունների մասնագետների հետ՝ կառուցելով արժեքավոր կապեր և ընդլայնելով իրենց մասնագիտական ցանցերը:

**Հյուրընկալող կազմակերպությունների դերը.**

Հյուրընկալող կազմակերպությունը տրամադրելու է գործողությունների ծրագիր և փորձնակության ամբողջ ընթացքում մասնակիցների համար ապահովելու է մենթորություն և աջակցություն: Յուրաքանչյուր փորձնակ ունենալու է իր ղեկավարը, ով նաև կլինի հիմնական կոնտակտային անձը: Հյուրընկալող կազմակերպությունը կուղղորդի փորձնակներին և կապահովի, որ վերջիններս ձեռք բերեն գործնական և մասնագիտական հմտություններ՝ միաժամանակ հարթակ ապահովելով այս երիտասարդների համար ակտիվորեն նպաստելու երիտասարդների ապագայի վերակառուցման հավաքական նպատակին:

**Հյուրընկալող կազմակերպությունները և փորձնակության ոլորտները՝**

| Կազմակերպություն | Մարզ | Ոլորտ |
|---|---|---|
| «Անահիտ» հյուրանոց | Լոռի, Ստեփանավան | Վերլուծություններ, մարքեթինգ |
| «Կանանց իրավունքների տուն» ՀԿ | Շիրակ, Գյումրի | Ադվոկացիա, ծրագրային աշխատանք, հետազոտություն |
| «Սոցիալական աջակցության համակարգչային կենտրոն» ՀԿ | Արմավիր, Վաղարշապատ | Կրթական և մշակութային ծրագրեր, իրազեկում, համայնքային աշխատանք |
| «ՄԻՏՔ» ՀԿ | Արմավիր | Հետազոտական աշխատանք, ծրագրային ներգրավվածություն |
| «Կոմպասս» ՀԿ | Շիրակ, Գյումրի | Թվային կառավարում և կայքի բարելավում, բյուջետային հետազոտություն |
| Գորիսի համայնքապետարան | Սյունիք, Գորիս | Ֆինանսական և ծրագրային բաժիններում ներգրավվածություն |

| | | |
|---|---|---|
| «Երիտասարդական գաղափարներ» ՀԿ | Տավուշ, Դիլիջան | Տեղահանված ընտանիքների հետ աշխատանք՝ սոցիալ-հոգեբանական և առողջապահական ոլորտներում |
| ՀԿ Կենտրոն | Լոռի, Վանաձոր | Հանրային կապեր, ադմինիստրատիվ աշխատանք, ծրագրային ներգրավվածություն |
| «Ազապե Վորլդ» | Գեղարքունիք, Ճամբարակ | Արշավային ակումբի աշխատանքներ՝ կազմակերպչական և գործնական գործառույթներ |
| Բայազետ կենտրոն ՀԿ | Գեղարքունիք, Գավառ | Կազմակերպչական և համայնքային աշխատանք |
| Տաթև համայնքապետարան | Սյունիք, Շինուհայր գյուղ | Տուրիզմ, համայնքային աշխատանք, բնապահպանության վերաբերյալ իրազեկում և նախագծերի իրականացում, ենթակառուցվածքների մշտադիտարկում և նախագծերի իրականացում |
| «Կողբ» կրթության մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամ | Տավուշ, Կողբ գյուղ | Հիմնադրամի ընթացիկ նախագծերում ներգրավվածություն |
| «Արդյունավետ կառավարում և համայնքային զարգացում» | Շիրակ, Կրաշեն գյուղ | Կազմակերպության ընթացիկ ծրագրերում ներգրավվածություն |
| Երիտասարդությունը հանուն փոփոխության | Գեղարքունիք, Վարդենիս | Ընթացիկ ծրագրերում ներգրավվածություն. բազաների թարմացում, կազմակերպչական աշխատանք, պայմանագրերի կազմում, հաշվետվությունների պատրաստում |

**Ովքեր կարող են դիմել.**

- Մրցույթին կարող են դիմել Արմավիրի, Տավուշի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում բնակվող18-25 տարեկան երիտասարդ մասնագետները: Արցախից տեղահանված երիտասարդները, ովքեր բնակություն են հաստատել նշված մարզերում, ևս կարող են դիմել մրցույթին:
- Մրցույթին կարող են դիմել ինչպես շրջանավարտները, այնպես էլ ուսումնական հաստատություններում ուսանող երիտասարդները:
- Մրցույթին կարող են դիմել այն երիտասարդները, ովքեր կարող են շաբաթական նվազագույնը 20 ժամ տրամադրել փորձնակության համար, ունեն սովորելու ցանկություն, ինքնազարգացման և հմտությունների կատարելագործման ձգտում:

**Ֆինանսական վարձատրության չափը. փորձնակության տևողությունը.**

Փորձնակության տևողությունը երեք ամիս է՝ **2024թ-ի օգոստոս-դեկտեմբեր** ամիսների ընթացքում: Փորձնակը մասնակցության ամբողջ ընթացքի համար կստանա **750 եվրոյին** համարժեք ՀՀ դրամ վարձատրություն:

**Ինչպես դիմել մրցույթին.**

Մրցույթին դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

- Հայտադիմում (համաձայն տրամադրված ձևաթղթի)
- Ինքնակենսագրական (CV)

Վերոնշյալ փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում հայտը չի կարող դիտարկվել: Ենթադրամաշնորհային մրցույթին դիմելու վերջնաժամկետը **2024թ-ի օգոստոսի 15-ն է**: Հայտադիմումը անհրաժեշտ է ուղարկել anna.mkrtchyan@kas.de էլ. հասցեին: Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել նույն էլ. հասցեով, կամ զանգահարել +37412545116 հեռախոսահամարով:

ՆՇՈՒՄ

- Ձեռագիր հայտերը չեն ընդունվելու:
- Վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերը չեն դիտարկվելու:
- Հայտադիմումները կարող են ներկայացվել հայերեն կամ անգլերեն:
- Տրամադրված տեղեկատվությունը կիրառվելու է բացառապես հայտերի դիտարակման համար և ենթակա չէ տարածման:
- Եթե հայտատուն հայտն ուղարկելուն հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում չի ստանում պատասխան նամակ հայտը ստանալու վերաբերյալ, խնդրում ենք գրել հետևյալ էլ. հասցեին՝ anna.mkrtchyan@kas.de, կամ զանգահարել +37412 545116 հեռախոսահամարով:

## ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Մրցույթի շրջանակում ներկայացված հայտերը կուսումնասիրվեն և կգնահատվեն ծրագրի ընտրական հանձնաժողովի կողմից՝ մրցույթի վերջնաժամկետին հաջորդող երկշաբաթյա ժամկետում: Ստորև կարող եք ծանոթանալ դիմորդների կողմից ներկայացվելիք հայտերի գնահատման չափանիշների աղյուսակին:

| | |
|---|---|
| **1.** | **Մասնագիտական կարողություններ (առավելագույնը՝ 35 միավոր)** |
| - | Դիմորդն ունի մասնագիտական կարողություններ՝ փորձնակության ընթացքում իրեն վերապահված գործառույթներն իրականացնելու համար: |
| **2.** | **Համապատասխանություն (առավելագույնը՝ 35 միավոր)** |
| - | Դիմորդի մասնագիտական պրոֆիլը համապատասխանում է սույն մրցույթում ներկայացված հյուրընկալող կազմակերպությունների գործառնական ոլորտներին: |
| **3.** | **Մոտիվացիա (առավելագույնը 30 միավոր)** |
| - | Դիմորդն ունի մոտիվացիա փորձնակության մասնակցության համար, ցուցաբերում է հետաքրքրություն և ոգևորություն ոլորտի նկատմամբ և կարող է տրամադրել անհրաժեշտ ժամանակ իր գործառույթների իրականացման համար: |

# ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

---

**Ընդհանուր դրույթներ.**

- Ընտրվելու պարագայում փորձնակը պետք է լիարժեք մասնակցություն ցուցաբերի փորձնակության ամբողջ ժամանակահատվածում և իրականացնի փորձնակության շրջանակներում իրեն վերապահված գործառույթները:
- Նախնական ընտրությունից հետո Հիմնադրամի և ԵՆԿ-ի հետ միասին հյուրընկալող կազմակերպությունը ևս կարող է մասնակցել փորձնակի հետ անցկացվող հարցազրույցին՝ վերջինիս մասնագիտական կարողություններին ծանոթանալու նպատակով:
- Եթե փորձնակության արդյունքում ստեղծվում են հաղորդակցական նյութեր, օրինակ՝ հրապարակումներ, հետազոտություններ, հոդվածներ և այլն, հյուրընկալող կազմակերպությունները և մասնակիցները պետք է հետևեն ծրագրի տեսանելիության սկզբունքներին՝ բոլոր հաղորդակցական նյութերը համապատասխանեցնելով «Հաղորդակցության և տեսանելիության» ուղեցույցին:
- Մրցույթի մեկ հայտարարության ներքո հայտատուն կարող է ներկայացնել միայն մեկ հայտադիմում:
- ԵՆԿ-ն կուղղորդի հյուրընկալող կազմակերպություններին և փորձնակներին՝ բովանդակային և գործառնական աջակցություն տրամադրելով: Հիմնադրամը և ԵՆԿ-ն կիրականացնեն մշտադիտարկում՝ ապահովելով ծրագրի դրական արդյունքները:

**Վճարում և փոխհատուցում.**

- Փորձնակները վարձատրությունը կստանան ամենամսյա վճարման սկզբունքով՝ ամենամսյա պատմողական հաշվետվության ներկայացումից հետո:

**Հաշվետվողականություն.**

- Փորձնակները պատմողական հաշվետվություն կներկայացնեն ամենամսյա հիմունքով՝ ըստ Հիմնադրամի կողմից տրամադրված ձևանմուշի:
- Հիմնադրամը և ԵՆԿ-ն կարող են մշտադիտարկման այցելություններ կատարել հյուրընկալող կազմակերպություններ և ծանոթանալ փորձնակների գործունեությանը:

# ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

**Փորձնակություն** - Փորձնակությունը մասնագիտական ուսուցման փորձառություն է, որը հնարավորություն է տալիս ունենալ բովանդակալից, գործնական աշխատանք՝ կապված անհատի ուսումնասիրության ոլորտի կամ մասնագիտական հետաքրքրության հետ: Փորձնակությունը հնարավորութուն է տալիս զարգացնելու մասնագիտական հմտությունները և կարիերայի նոր հեռանկարներ է ստեղծում: Այն գործատուին հնարավորություն է տալիս նոր գաղափարներ և էներգիա բերել աշխատավայր, զարգացնել տաղանդներ և ներուժ:[1]

[1] Career Center: https://careers.umbc.edu/employers/internships/what-is-an-internship/#:~:text=An%20internship%20is%20a%20professional,and%20to%20learn%20new%20skills.